



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 52-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«52. անհատ ձեռնարկատեր փաստաբանները և փաստաբանական ծառայություններ մատուցող իրավաբանական անձինք՝ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների մասով.»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը 2019 թվականի հունվարի 1-ից:»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն օրենքի նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 01.06.2018թ. թիվ 581 որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիրը (**այսուհետ՝ նաև Ծրագիր**), որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 07.06.2018թ.:

Մասնավորապես, Ծրագրի 6.2 ենթակետից հետևում է Կառավարության հանձնառությունը ՀՀ տնտեսական գրավչությունը մեծացնելու և ներդրումային միջավայրը բարելավելու նպատակով ձևավորել հնարավորին կայուն և կանխատեսելի հարկային միջավայր և շարունակաբար բարելավել գործարար միջավայրը: Ըստ էության, Ծրագրի նշված դրույթի հիմնական նպատակներից է տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունների ողջամիտ բեռնաթափումը և այդպիսով տնտեսության աշխուժացումը:

ՀՀ կառավարության նոր առաջնահերթությունների լույսի ներքո անհրաժեշտ է վերանայել ՀՀ հարկային օրենսգրքի մի շարք կարգավորումներ՝ ապահովելով տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունների խելամիտ բեռնաթափումը և վերաբաշխումը:

Սույն համատեքստում առաջարկվում է փաստաբանական ծառայություններ մատուցող անձանց ազատել ավելացված արժեքի հարկից այն դեպքերում, երբ նրանք ծառայություն են մատուցում ֆիզիկական անձանց:



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին**

Ավելացված արժեքի հարկն անուղակի հարկատեսակ է և վերջինիս վճարման պարտականությունը փաստացի դրված է սպառողների, այն է՝ համապատասխան ապրանքները կամ ծառայությունները ձեռք բերող անձանց վրա: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ոչ բարվոք իրավիճակը, փաստաբանների պալատը գտնում է, որ սույն հարկատեսակը լրացուցիչ սոցիալական բեռ է ազգաբնակչության համար: Մինևույն ժամանակ գիտակցվում է այն փաստը, որ հարկային արմատական բարեփոխումները պետական բյուջեի բնականոն համալրումն ապահովելու տեսանկյունից առայժմ կարող են լինել ռիսկային: Մյուս կողմից, հանրությանը մատուցվող մի շարք ծառայություններ առնչվում են մարդկանց առողջության պահպանմանը, ինչպես նաև գույքային և ոչ գույքային իրավունքների իրացման իրավական ապահովմանը, որոնք կենսական նշանակություն ունեն ցանկացած մարդու համար:

Համապատասխան ոլորտներում գործող ծառայություններից օգտվող ֆիզիկական անձինք հետապնդում են գերազանցապես անձնական կամ սպառողական նպատակներ՝ հոգալով անձնական կարիքները: Ավելացված արժեքի հարկի դրույքաչափի ներառումը ծառայությունների ընդհանուր արժեքում բարձրացնում է ծառայությունների գինը և նվազեցնում դրանց մատչելիությունը սոցիալական լայն շերտերի համար, որոնցից շատերը գտնվում են սոցիալապես ոչ բարվոք վիճակում, իսկ սոցիալական ապահովության պետական կառուցակարգերը կա՛մ բացակայում են, կա՛մ պատշաճ չեն գործում:

Նման պայմաններում պետությունը կարող է գնալ հարկային բեռի թեթևացմանը՝ հանրային կարևոր նշանակություն ունեցող մի շարք ծառայություններ ազատելով ավելացված արժեքի հարկից: Որպես այդպիսի ծառայությունների հնարավոր շրջանակ ընտրվել է փաստաբանական ծառայությունները:

Առնվազն այս ոլորտում ավելացված արժեքի հարկի չեղարկումը ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների մասով կնպաստի գնանկմանը և համապատասխան ծառայությունները կդարձնի բնակչության համար առավել հասանելի: Գների անկումն իր հերթին կնպաստի բնակչության գնողունակության ավելացմանը, իսկ այլ ծառայությունների սպառման պահանջարկը կհանգեցնի այդ ծառայությունները մատուցող տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարվող այլ հարկատեսակների՝ եկամտային հարկի, շահութահարկի հարկման բազայի ավելացմանը՝ այդպիսով փոխհատուցելով ավելացված արժեքի հարկի գծով բյուջետային մուտքերի նվազումը:



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին**

Սույն փոփոխությունը բխում է նաև տնտեսվարողների շահերից, քանի որ ավելացված արժեքի հարկի ոլորտային չեղարկման արդյունքում թիրախային ծառայությունների գնանկումը բացասաբար չի ազդի ձեռնարկատերերի եկամուտների վրա, քանի որ այդպիսով պարզապես կչեղարկվի ծառայությունների վերջնական գնի մեջ հաշվարկվող պետության «մասնաբաժինը»:

Առաջարկվող փոփոխությունը նաև դրականորեն կազդի փաստաբանության ոլորտում գործող տնտեսվարողների գործունեության վրա, ինչպես նաև կնպաստի տնտեսության հարակից ճյուղերում տնտեսական ակտիվության աճին:

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման, գործող իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԵՎ
ԾԱԽՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության եկամուտների կրճատում, սակայն ծախսերի ավելացում չի նախատեսվում: